

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1953

ՀԺԱ. Տ Ա Ր Ի



ՅՈՒՆԻՍ - ՅՈՒԼԻՍ

ԹԻԻ 6 - 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ը

Հայ մամուլը իր սփռույթին մեջ անցնող կրկնակ տարիներուն ստեղծ կրթկանեց ու յեղյեղեց անունը Ռեբեկա Պերպերեանի՝ անոր ծննդեան հարիւրամեակին արձագանգներով (1851) : Անուն՝ որպէս տիպար վարժապետի կամ դաստիարակի, որ տիրապետեց շուրջ կէս դար, անցնող դարու վերջին քառորդէն մինչեւ մեր դարու առաջին տասնամեակը :

Գաղտնիքը Պերպերեանի մեծութեան՝ պաշտամունքն եղաւ ճշմարտին - բարւոյն - զեղեցիկին, ինչ որ նա իրեն բնաբան ընտրեց եւ կոչում :

Որպէս դաստիարակ՝ նա ունեցաւ խօսք եւ գործ միանգամայն. իր խօսքը այնքան զօրեղ եւ կրթիչ՝ զեռ քարմ կը մնայ «Դաստիարակի մը խօսքեր»ուն մէջ, ինչպէս «Մարդիկ եւ իրք» եւ «Դպրոց եւ դպրութիւն» երկերուն մէջ :

Իսկ իր գործը, կենդանի եւ խօսուն, երկար շարքը այն սերունդներուն՝ գոր նա իր սրտին վրայ մեծցուց եւ տուաւ ազգին՝ փայլուն եւ կարկառուն դէմքեր, գրական ու հասարակական ապարդիւններուն մէջ, ինչպէս Ինտրա, Ասֆանազ, Սիւսանթո, Պարբեան, Սեւակ, Մեծարեան եւն... :

ԲԱՋՄԱՎԷՊ

Նա գնահատողն էր հին արժեքներուն՝ առանց նորն արհամարհելու։ Պաշտոնը գրաբարին՝ առանց հետեւելու մոլեռանդներուն, թէեւ իր ընթացքը աշխարհագրարին մէջ դանդաղ եղաւ եւ երկչոտ։

Հին ու նոր սերունդին միջեւ կանգնած նա որպէս դատաւոր, տուաւ իր իմաստուն պատգամը։ Եւ անաչառ խարազանեց հին արժեքներն արհամարհող սանձարձակ մտայնութիւնը, քանի որ չէ կարելի մոռնալ թէ «Տունն՝ հիմամբ է տուն, եւ ծառն՝ արմատով է ծառ», ինչպէս կ'ըսէր ուրիշ մեծագոյն դաստիարակ մը՝ Ալիշան։

Մեր դիտումը չէ հոս Ռեթէոս Պէրպէրեանի վրայ ծանրանալ։ Այլ անոր յիշատակով շեշտել կարկառուն վարժապետը որ իր խոր դրոշմը կը թողնէ սերունդներու եւ ազգերու վրայ։ Շեշտել կարեւոր դերը վարժապետին, մանաւանդ հայ վարժապետին, քանի որ անիկա է կազմողը մեր սերունդներուն, մեր մտայնութեան, մեր ապագային։

Մեծ հեղինակներ մայրերուն ուղղած են իրենց ահաւոր կոչն ու աղաղակը՝ թէ անոնց քովն է ցեղերու կեանքն ու նակատագիրը։ Բայց մենք կը կարծենք թէ ազգերու նակատագրին մեծագոյն պատասխանատուն դաստիարակներուն քովն է։ Ուրեմն եւ մեր հայ նակատագրին։

Ահա թէ ո՛րքան կարեւոր է Հայ վարժապետին դերը հայ ազգի մեծ դատին մէջ։

Ահա թէ ո՛րքան կարեւոր է հայ վարժապետներ պատրաստել՝ հայ ազգի սերունդները կազմաւորող եւ անոնց մտայնութիւնն առաջնորդող՝ դէպի նշմարիտը, բարին ու գեղեցիկը։

Ըսինք թէ Ռեթէոս Պէրպէրեան խօսքի մարդն էր, ինչպէս միանգամայն գործի։

Իմաստուն խօսքի եւ իմաստուն դաստիարակի։

Ու ըմբռնելու համար իր գաղափարը իսկական ու հարազատ վարժապետի մասին, ինչ որ իր անձին մէջ ալ կրցաւ մարմնաւորել, կ'արժէ վերլուծել այն սիրուն էջը գործի թողած է նա «Վարժապետ»-ին վրայ։ Զայն պիտի գտնէք ամէն հայ ծաղկափայլ մէջ որպէս գոհար մը որ պէտք էր զինքին պէս չէ գնահատուած։

Ամէն վարժապետ պէտք է սերտէ գայն որպէս հանգանակ իր առաքելութեան, եւ իր անձին մէջ իրականացնէ այն ամբողջ բարդ եւ մեծ նկարագիրը գործի կոչումը կը պահանջէ։

Պատկերներու եւ օրինակներու բացառիկ ընտրութեամբ եւ շնորհով անոր գրչին տակ կը ներկայանայ այդ բարձր ու խոնարհ արարածը։ Բարձր՝ քանի որ առաջնորդ է եւ կոչումն ունի անկերպարան միտքն ու սիրտը կերպարանաւորել։ Դարբին՝ որ պիտի կռէ ու կռիւն այդ միտքն ու սիրտը, ու իր մոգական լապտերով մթին ֆառսէն լոյս աշխարհ հանէ արարչագործու-

թեան այդ հրաշալիքը իր մեծութեան ու իր փայլին մէջ։ Ու երեւոյն երէկի բիրտ, դաժան ու կրքերու գերի մարդը՝ ազնուացած, փաղցածպիտ ու մարդասէր, որ սիրոյ հետ արցունք ալ ունի իր նմաններուն հանդէպ, որոնց մէջ Արարչին պատկերը կը տեսնէ։

Իսկապէս աղամանդ՝ գոր վարժապետը անդուլ քրտինքով ու տաժանքով կը սրբէ, կը յղկէ։ Եւ նորակերտ գեղերես ակունքին մէջ իյնալով նշմարիտ - բարոյն - գեղեցկին նախնիք՝ կը բեկբեկի շողարձակ՝ երկնային հմայքով։ Ո՞վ է այդ հրաշքը գործողը. — վարժապետը — այդ բարձր էակը։ Բայց ըսենք հոսկ՝ այդ խոնարհ էակը. որուն համար չեն ոսկի ու արծաթ, զրօսանք եւ հեշտանք, այլ ջանք եւ տաժանք, երկար ու համբերատար տփնուքիւն, անդուլ գոհողութիւն, վերջապէս նոյն ինքն Պէրպէրեանի բառով՝ մարտիրոսութիւն, գոհաբերութիւն, յանուն մարդկային յառաջդիմութեան, անշուշտ նշմարիտ յառաջդիմութեան եւ նշմարիտ երջանկութեան։

Ու մենք ալ պիտի գմայլինք Ռ. Պէրպէրեանի հետ ու ամենափաղցր սիրով եւ ամենախորին յարգանքով յիշենք անունը օրհնեալ վարժապետին, հայ մեծ եւ առաջին վարժապետին՝ ՄԵՍՐՈՊԻ՝ որ օր մը, մեծ մարգարէին նման կոչուած իր ազգին առաջնորդը դառնալու, առանձնացաւ հայ սինէական բարձունքները եւ խորհրդաւոր վերացումի մը մէջ, որ «ոչ ի փուն երազ եւ ոչ յարթութեան տեսիլ» էր, ստացաւ աստուածապարգեւ հայ գիրը եւ գայն վարդապետելու մեծ առաքելութիւնը։

Ու դարերու ընթացքին, ողողուած Մեսրոպի աստուածային շառայութեան եւ հոգիացած իրենց կարգին վարժապետները դարձան հայ ազգին՝ հոբնացի, Նարեկացի, Շնորհալի եւ վերջին դարերու վրայ տիրապետող եւ հայութիւնը վերածնող տիտանը Միսիբար, որուն շունչէն ոգեւորուած՝ մեր սերունդներն ոգեւորեցին՝ Ալիշան, Պէշիկբաշիեան, Պատկանեան եւ հոսկ Պէրպէրեան ու նմաններ։

Օրհնեալ՝ ըլլան հայ վարժապետները, ու մանաւանդ ան որ լուսանախնայ կը հսկէ երկնքի անհաս եւ անբռնաբարելի բարձունքէն ու կը ներշնչէ ամէն հայ վարժապետի որ կոչուած է հայ ցեղը կրթելու իր Հայրերուն հարազատ հաւատով, անոնց այբուբենով ու անոնց մշակոյթով։

Հ. Ե. Փ.



408-71